«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ `սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՌԱՐԿԱ՝ Գերմաներեն

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝՝ Արմինե Թովմասյան

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ Ձուլիետա Հակոբյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սեմյոնովկայի հիմնական դպրոց

Սևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....6

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ.....9

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻ

ՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առանց լեզվի ո՞չ անհատը , ո՞չ էլ ժողովուրդը ի վիճակի չեն իրենց մտքերն ու զգացմունքները հաղորդել ուրիշներին և հատկապես՝ ապագա սերնդին:

Խ. Աբովյան

Երեխան ամենից առաջ զարգացող էակ է և զարգացումն այդ ենթակա է քիչ թե շատ կոշտ օրինաչափությունների: Յուրաքանչյուր տարիքում մարդը հասնում է զարգացման մի միջին մակարդակի, որն հնարավորություն է տալիս նրան յուրացնել-իմաստավորել աշխարհի մասին գիտելիքների ու հասկացությունների մի սահմանափակ ոլորտ:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այդ տիպի հաշվառումն ուսուցման պրակտիկայում անհրաժեշտ պայման է՝ կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ, հանրահայտ է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր (ո՛չ վերացական) բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել: Այսինքն՝ երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը. երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը՝ դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն:

Մեր խորին համոզմամբ, երեխան ուզում է ակնառու պատկերացնել՝ ուսուցիչը, դասագիրքը նրան տեսություն են մատուցում, երեխան ուզում է պրակտիկ

գործունեություն, բնության հետ կենդանի շփում: Երեխան ուզում է իրեն մատուցվող գիտելիքների իմաստն հասկանալ:

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին: Սակայն, կրթական պրակտիկայում դաստիարակության և ուսուցման ոլորտները նկատելի չափով տարանջատվում են, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու կրթության ընդհանուր որակի ցանկալի մակարդակ:

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, **որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:**Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության պայմաններում ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: Ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:

Հայ երեխայի մեջ անհատապաշտական ոգին ուժեղ է արտահայտված: Այս առումով հանրակրթության ոլորտում մենք առավելապես սոցիալական անհատների և սոցիալական բնավորության ձևավորման խնդիր ունենք: Ուսուցիչը չպետք է անտեսի այս պարագան և ամեն կերպ սատարի մատաղ սերնդի մեջ հայրենասիրության ոգու արթնացմանն ու ծավալմանը: Մեր հայրենիքը, մեր լեզուն ու հավատը, մեր մշակութային գանձերը, մեր գիտնականներն ու արվեստագետները, մեր ռազմական գործիչներն ու մեր հերոսները պետք է ամենաբազմազան ձևերով և բազմակողմնանիորեն ներկայանան տարբեր ուսումնական նյութերում, դասերի կազմակերպման մեջ, պատի թերթերում և այլուր: Սակայն երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ուսուցիչը պետք է սերտորեն համագործակցի սովորողների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել ուսուցիչների աշակերտների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության լավագույն միջոցներն ու հնարները և գրանցել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները՝
ուսումնասիրել թեմային առնչվող գրականությունը,

կազմակերպել սովորողների կրթությունը և ընտանեկան դաստիարակությունը՝ համագործակցելով երեխաների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ, սովորողների դաստիարակությանը մասնակից դարձնել նաև ծնողներին և նրանց օրինական ներկայացուցիչներին և բացահայտել, թե ինչպես է ընթանում սովորողների դաստիարակությունը դպրոցի պատերից դուրս:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսումնասիրելով գիտամանկավարժական գրականությունն՝ առանձնացրել ենք մի շարք կարևոր վերլուծություններ: Ներկայացնենք ստորև.

Երեխան ընկալվում է որպես դաստիարակության գործընթացի բացարձակ արժեք, որպես «չափ բոլոր իրերի»:

Մարդը և դաստիարակության նպատակն է, և արդյունքը: Հետևաբար երեխայի դաստիարակելու , կրթելու անսակարկելի պայմաններից մեկը նրա բարձրարժեքության ընդունումն է, ավելին՝ ոչ միայն ընդոջնումն այլև երեխայի այդ կարիքի բավարարումը[1]: Երեխան պետք է զգա, որ ինքը կարևոր մարդ է՝ տանը, դպրոցում, հասարակական միջավայրում, տարեկիցների, բարեկամների և, վերջապես, հասարակության ու պետության մեջ:

Կրթության արդի զարգացումներում առանձին կարևորություն է ստանում նաև սովորողների էկոլոգիական դաստիարակության և էկոլոգիական գիտակցության ձևավորման խնդիրը: Բնական միջավայրն ու կենսահամակարգերն այսօր, հայտնի բան է, շատ են տուժում մարդու ոչ այնքան ողջամիտ գործունեությունից. օդի աղտոտում, կենսաբազմազանության նվազում, գլոբալ տաքացում: Խոսում են նույնիսկ Երկրամերձ տարածքում առկա տիեզերական աղբի մասին: Բնությանը հասցրած վերքերը բումերանգի նման հարվածում են նույն մարդուն, քանզի բնությունը նրա միակ միջավայրն է, միակ տունը, որտեղ նա կարող է ապրել: Մատաղ սերնդի հոգում կենդանի ու անկենդան բնության նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք ձևավորելը թե՛ հանրակրթական դպրոցի, թե՛ ամեն մի առանձին ուսուցչի պարտականությունն է:

Մեր հանրակրթության մեջ գնահատման նոր համակարգի ներդրումը ենթադրում է «գնահատում» հասկացության իմաստի ընդլայնում: Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին: Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իր այս գործառույթից զատ այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ: Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնահիրացմանը:

[1] Селевко Г. К., Традиционная педагогическая технология и ее гуманистическая модернизация, М. 2005, стр. 69,

Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում

ունենա թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:

Սովորողը ձգտում է ինքնահիրացման: Նա բնականաբար ձգտում է ընտրել ուսումնական գործունեության այն ոլորտը, որն իրեն առավելապես հետաքրքիր է և իր ընդունակություններն օգտագործելով կարող է լավագույնս բավարարել իր մտավոր, հոգևոր կամ ֆիզիկական պահանջմունքները:

Առաջադիմության միավորային գնահատման պայմաններում, երբ ուշադրության է արժանանում գլխավորապես սովորողի փաստական առաջադիմությունը, աշակերտի մեջ չեն ձևավորվում ինքնագնահատման պահանջ ու կարողություններ: Միջոցներ չունենալով սեփական անձը գնահատելու՝ նրա ինքնագնահատականը կախյալ է դառնում շրջապատի կարծիքից: Արդյունքում դժվարանում է այնպիսի կարևոր անձնային որակների ձևավորումը, ինչպիսին ինքնուրույնությունն ու անկախ մտածելակերպն է: Բացի այդ, ընդունակությունների մի ստվար բաժին՝ մտածողության յուրակեր-պությունը, ուսումնառության մոտիվները, ուսումնական գործունեության առանձնահատկությունները մնում են չբացահայտված:

Գնահատման համակարգի զարգացման ժամանակակից փուլում նկատելի է ուսուցչի գնահատումից սովորողի մասնակցությամբ գնահատմանն անցման միտումը, ինչպես նաև՝ գնահատման անորոշ և աշակերտից թաքուն պահվող չափանիշներից անցում գնահատման բացահայտ չափանիշների: Այս պրոցեսները նպատակ ունեն ուսումնական գործունեությանն ուղեկցող մրցակցային վնասաբեր հարաբերությունները փոխարինել համագործակցային հարաբերություններով: Գաղտնիք չէ նաև, որ առկա համակարգում առավելապես գնահատվում են սովորողների գիտելիքներն ու հիշողությունը: Մինչ համաշխարհային կրթական զարգացումները մատնանշում են այլ ճանապարհ. գնահատել ավելի համալիր որակներ՝ առարկայական ու վերառարկայական մտահասություններ, իսկ հիշողության փոխարեն արժևորել հասկացման, երևույթների մեկնաբանման, վերլուծման ու համադրման կարողությունները: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է[1]:

Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու

ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը[2]:
Ինչպ՞ես դաստիարակել աճող սերնդի մեջ բարոյական բարձր հատկություններ, որտեղի՞ց են գալիս այս ճանապարհին ընկած դժվարությունները, ինչպե՞ս կանխել կամ հաղթահարել դրանք, ի՞նչը կարևորել երեխայի դաստիարակության հարցում, ո՞վ է երեխայի կրթության պատասխանատուն: Սրանք, թերևս, մի քանիսն են համազգային նշանակություն ունեցող այն բացառիկ կարևոր խնդիրներից, որ հուզում է հոգեբաններին, ուսուցիչներին, դաստիարակներին, ծնողներին և նաև հասարակության բարօրությամբ մտահոգ ամեն մի քաղաքացու:

---

[1] Հռիփսիմե Ղաջյան, Երեխաները տարիքն ի վեր, Երևան, 2002, էջ 50,

[2] Стоунс Э., Психопедагогика ,М ., 1984, стр. 154,

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԸ ԴԵՐԸ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ

Բարոյապես անբասիր անձնավորության ձևավորումը որքան կարևոր, նույնքան և դժվարին խնդիր է: Որքան էլ մեծ է ուսուցչի հսկա աշխատանքը, այնուամենայնիվ այստեղ բախտորոշ դեր է կատարում ընտանիքը:

Երբեք չի հնանում կենսական այն ճշմարտությունը, ըստ որի , ոչ մի խելոք խոսք ու խրատ այնքան արձագանք չեն գտնում մանկան արթուն հոգում, որքան ծնողների և մերձավորների իրական կյանքն ու բարքը:

Կյանքի կենդանի տպավորություններն անհամեմատ զորեղ են ու ներգործուն: Երեխայի զգայուն հոգին որսում է մարդկային հարաբերությունների այնպիսի

բրբերանգներ, որ շատ անգամ կարող են վրիպել չափահասների ուշադրությունից: Որեմն իր զավակների դաստիարակության մասին հոգացող ծնողը նախ պետք է շիտակ պատասխան տա այն հարցին, թե ինչպիսին է ի՞ր կյանքը:

Մարդկության դարավոր կենսափորձը սերնդեսերունդ կուտակվելով, ամրապնդվում է , դառնում օրենք, ավանդույթ, բարոյականության չափանիշ, համակեցության կանոն և, ժամանակի ընթացքում ենթարկվելով հասարակական տեղաշարժերով թերադրված փոփոխությունների, որոշակի հունի մեջ է դնում անձի վարքագիծը, նաև հեշտացնում աճող սերնդի դաստիարակությունը: Պատահական չէ, որ օրինապահ, ավանդապահ, տֆվյալ երկրի ու ժողոբրդի բարոյական չափանիշներին ներդաշնակ ապրող չափահասների միջավայրում երեխաների դաստիարակությունը ընթանում է անհամեմատ հարթ: Զվակները փոքր ու մեծ են ճանաչում , գիտակցում են իրենց պարտականությունները և չեն զլանում դրանք կատարել, անհամեմատ բարեկիրթ են: Նրանց հոգում մանկուց ծլարձակում և արմատ է գցում այն համոզմունքը, որ բարոյական մարդու խոսքի ու վարքի միջև հակասություն չկա:

Մինչդեռ ինչքան քիչ բան է խոստանում և ինչ վտանգներով է հղի դաստիարակությունն այն երեխայի, ում ծնողները խոսում են ազնվությունից, բայց չեն խորշում կեղծելուց, խոսում են մարդկային բարձր որակներից և շատ անգամ անտեսում դրանք, խոսում են բարությունից, բայց կարող են այս կամ այն կոնկրետ իրադրությունում ունենալ անսիրտ ու անողոք վարվեցողություն:

Կյանքի կենդանի տպավորությունները , կաթիլ-կաթիլ կուտակվելով, ստեղծում են հոգեկան որակ: Երախան նմանվում է ծնողին՝ ընդօրինակելով ապրելու նրա եղանակը:

Հանրահայտ է Լև Տոլստոյի այն միտքը,թե « Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար , յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովւ»:

Այս հարսի մասին խոսելիս անհնարին է չանդրադառնալ հոգեկանի այն կողմերին, որ անվանում են պահանջմունքներ:

Հոգեբանական գիտությունը հաստատել է, որ պահանջմունքներն են անձի ակտիվության խթանը, այն ուժը, որ նրան մղում է գործերի, ձեռնարկումների, որոշակի ուղղություն է տալիս նրա կամային ջանքերին:

Ըստ մակարդակի՝ պահանջմունքները լինում են նյութական(սննդի, հագուստի, բնակարանային, աշխատանքային գործիքներ և այլն) և հոգեկան (ազատության, մտերմության, իմացության, ինքնահաստատման, հարգանքի և այլն): Թե՛ նյութական և թե՛ առավել բարձր՝ հոգեկան պահանջմունքները բավարարվելիս չեն մարում, այլ հանդես են գալիս էլ ավելի բարձր մակարդակով: Եթե ասենք, մեկը չունի տանիք իր գլխի վերև , ձևավորվում է բնակվելու համար մի անկյուն ունենալու պահանջմունքը:

Հասկանալի է, որ այսօրվա երեխայի՝ վաղվա քաղաքացու դիմագիծը ուղղակի կախում ունի այն բանից, թե որոնք են նրա ծնողների, մերձավորների առաջատար

պահանջմունքները և հարկ եղած դեպքում որ պահանջմունքը որին են զոհում, ասենք՝ նյութական շահը պատվի՞ն , թե՞ պատիվը՝ շահին:

Իրական կյանքի փաստերը հազարապատիկ հաստատել են, թե ինչ բախտորոշ նշանակութոյուն ունի աշխատանքի պահանջմունքը: Որոշ ծնողներ աշխատանքը դիտում են լոկ որպես վաստակի միջոց: Բայց չէ՞ որ աշխատանքը նաև ինքնահաստատման միջոց է: Այն գիտակցությունը,, թե ինքը ինչ-որ արժեք է ստեղծում , լինի այն նյութական թե հոգևոր, որ մարդիկ այն գնահատում են , անձին տալիս է բավարարվածության զգացմունք, իմաստավորում է նրա կյանքը: Մինչդեռ մակաբույծը ոչ միայն բեռ է հասարակության և ընտանիքի համար, այլև չի կարող իսկապես երջանիկ կինել: Աշպատանքը երեխայի բարոյական դաստիարակության հզոր միջոց է : Մարդը հոգեպես արատավորվում է այն ժամանակ , երբ պարապ են մնում միտքն ու ձեռքերը:

Պահանջմունքների հետ սերտորեն առնչվում է հոգեկանի մեկ այլ կողմ՝ հետաքրքրությունները: Յուրաքանչյուրին հետաքրքրում են առաջին հերթին այն առարկաները, անձինք և գործունեության բնագավառները, որոնք ուղղակի առնչվում են իր առաջատար պահանջմունքներին: Հետաքրքրությունները որոշակի կողմնորոշում են տալիս ուշադրությանը: Գիտակցությունը, ուրեմն և անձի ակտիվ գորշունեությունը ուղղվում է որոշակի օբյեկտների:

Եթե մեզ հաջողվում է երեխայի հոգում ձևավորել մարդկայնորեն արժեքավոր պահանջմունքներ ու հետաքրքրություններ , այս հիմքի վրա էլ հուսալիորեն բարձրանում են նրա իդեալն ու երազանքը, ձև ու կերպ առնող բարոյական սկզբունքները, քաղաքացիական դեմքը:

Իսկ ի՞նչ ասել է դաստիարակել զգացմունքներ: Այս հարցում հատկապես բացառիկ է ընտանիքի դերը: Ինչի՞ նկատմամբ ենք մենք զգացմունքներ տածում: Այն ամենի, ինչ ճանաչում ենք: Անտեղյակությունն ուղեկցվում է անտարբերությամբ: Իր արյունակից հարազատին չտեսած երեխան չի կարող նրան խորապես սիրել, որքան էլ կամենա: Զգացմունքը՝ լինի այն սեր թե ատելություն, հպարտություն, հիացմունք թե արհամարհանք, ծնվում է իրական շփումներից: Պատահական չէ, որ երեխան ջերմ զգացմունքով կապվում է այն մարդկանց, ում ձեռքերին մեծացել է և այն վայրերին, որտեղ ծնվել ու ապրել է: Երեխան չի կարող հայրենասեր լինել , եթե չճանաչի իր երկիրը՝ նրա բնությունը, մարդկանց, չիմանա նրա պատմությունը, երգերը , լեզուն: Ուրեմն, զգացմունքների հարստացման կարևոր պայմանը՝ երեխայի բազմազան շփումներն են աշխարհի հետ, տպավորությունների հարստությունը:

Ամեն մի զգացմունք մարդու ապրած բազմաթիվ հույզերի ընդհանրացումն է:

Շատ մեծ գրողներ, մանկավարժներ ու հոգեբաններ վկայում են, թե անձի հոգեկան դիմագծի հարցում ինչքան բախտորոշ դեր ունի վաղ մանկական տարիների նրա կյանքը: Այս, թերևս, հոգեկան գործունեության ոչ մի կողմին չի վերաբերում այնքան, որքան զգացմունքներին: Ամենապայծառ լույսը, որ ջերմացնում է մանկան հոգին, ծնողների սերն է ու գորովը:

Երեխայի երջանկության համար կարևոր է ոչ այնքան այն, թե որքան լի ու առատ է նա ապրել, և ոչ այն, թե որքան գիտելիք է ձեռք բերել, որքան այն, թե

բարոյական ինչ նկարագիր ունի և առաջին հերթին՝ բարոյական զգացմունքների ինչպիսի հարստություն:

Չենք կարող չանդրադառնալ այնպիսի կարևոր երևույթի ինչպիսին գեղագիտական դաստիարակությունն է: Որքան մեծանում է երեխան, այնքան ավելի նոր, բազմազան ուղիներ են բացվում՝ զարգացնելու նրա գեղագիտական ճաշակն ու զգացմունքները: Բազմապատկվում են երեխայի շփումները գեղեցիկի հետ, որ ստեղծել են բնությունն ու մարդը: Եվ որքան պարբերական ու նպատակաուղղված են այս շփումները, այնքան մեծ է երաշխիքը գեղագիտական զգացմունքների հարստության: Դասերի ընձեռածհնարավորությունները լրացվում են ընթերցանությամբ, էքսկուրսիաներով, տուրիստական արշավներով, համերգների ունկնդրումով, կինոֆիլմերով ու ներկայացումներով:

Շատ կարևոր է, որ այս հարցում ծնողը չկորցնի չափի զգացումը, չջանա արհեստականորեն առաջ ընկնել երեխայի զարգացման ռեալ հնարավորություններից: Զգացմունք կարող է հարուցել այն, ինչ երեխայի կողմից ընկալվում է: Եթե երեխային պարտադրվեն այնպիսի գրքեր, որոնք բարդ են նրա հոգեկան զարգացման մակարդակի համեմատ, ապա շատ ավելի հավանական է, որ նա, առհասարակ, կորցնի ընթերցելու ցանկությունը: Որևէ լուրջ ֆիլմում ծանձրացող փոքրիկը բուռն հրճվանքով է դիտում հերթական ուրախ մուլտֆիլմը: Ամեն մի հասակ պահանջում է իրեն պատշաճ հոգեկան սնունդ:

Դպրոցական տարիքում, գործունեության բնույթի փոփոխությունների հետևանքով, թե՞ հարստանում է գեղագիտական զգացմունքների բովանդակությունը, թե՞ նրանց դրսևորման ձևերն են փոխվում: Կուլտուրական վարքի հմտությունների ձևավորումը, զսպվածությունը, կամքի ձևավորմանը համընթաց հույզերն սկսվում են դրսևորվել համեմատաբար սակավ անմիջականությամբ:

Զգացմունքները, իհարկե, արտաքին դրսևորման ավելի մեծ հնարավորություն ունեն, քան հոգեկան մյուս կողմերը: Բայց ճիշտ չի լինի, եթե այդ դրսևորումով չափվի երեխայի զգացմունքների հարստությունը: Հուզական ռեակցիաների ուժը , տեմպը և ռիթմը ավելի շատ կախված են երեխայի կամային-տիպային հատկություններից:

Եթե վաղ հասակում երեխայի հայացքը շոյում էր միայն ֆիզիկապես գեղեցիկը, ապա ավելի ուշ գեղագիտական զգացմունքների աղբյուր են դառնում նաև բարոյապես գեղեցիկը, մարդկային գեղեցիկ արարքները:

Ինչ խոսք, արտաքին գեղեցկությունը շատ ավելի ակներև է , այն արժեքավորելը և նրանով հիանալը շատ ավելի դյուրին, քան բարոյապես գեղեցիկը արժեքավորելը:

Շատ բան արած կլինի ծնողը իր զավակի հոգեկան հարստության համար, եթե նրա գիտակցությունն ուղղի բարոյապես գեղեցիկին, հակի նրան դեպի բարոյապես գեղեցիկ արարքները: Մինչդեռ, երբեմն արտաքին գեղեցկության նկատմամբայն բծախնդիր, աչքաթող են անում մարդկային արարքների, վարքի գեղեցկությունը:

Դաստիարակել երեխայի մեջ գեղագիտական զգացմունք նշանակում է նաև ապահովել նրա կենցաղի, սովորությունների գեղեցկությունը:

Տխուր է , բայց կան երեխաներ, որոնք ուրիշին անախորժություններ պատճառելը, ծաղրելն ու զայրացնելը ոչ միայն տգեղ չեն համարում, այլև համարում են քաջություն, գովասանքի արժանի բան: Նրանք հաճախ իրենց չարախնդության օբյեկտ են դարձնում իրենց հեզաբարո, զգայուն հասակակիցներին, և որքան խորն է տառապում վերջինս, այնքան ավելի անողոք են դառնում: Երբեմն ծնողները անտարբեր են մնում այդպիսի միջադեպերի նկատմամբ՝ համարելով դրանք անվնաս չարաճճիություն: մինչդեռ սա չարիք է ոչ միայն հալածվող երեխայի համար, որը հոգեպես ճնշվում, վհատվում է, այլև հարձակվողի համար, որի էության մեջ ծլարձակում են հոգու այնպիսի արատներ, որպիսիք են չարությունն ու դաժանությունը:

Մարդկային հոգու բոլոր ելևէջները,ի վերջո, դրսևորման երկու եղանակ ունեն՝ շարժում և խոսք: Բնական է, որ երեխաների գեղագիտական դաստիարակության մասին խոսելիս անհնարին է շրջանցել հոգեկան այնպիսի մի պրոցես, որպիսին խոսքն է:

Միշտ չէ, որ մենք արժանի կարևորություն ենք տալիս երեխաների խոսքի կուլտուրային: Նրանցից շատերի համար գոյություն ունի խոսքի երկու տարբերակ, երկու մակարդակ: Մեկն, այսպես ասած, դպրոցի , դասերի համար նախասահմանված խոսքն է, որ պահանջում է լեզվական բծախնդիր մաքրություն, ճշտություն , բարեհնչութնություն: Մյուսը ընտանիքում և խաղընկերների հետ փոխանակվող խոսքը, որ անփույթ է , խառնալեզու, համեմված մակաբույծ բառերով: Երեխաներ կան , հատկապես տղաներ , որոնք նույնիսկ անհարմար բան են համարում իրենց մտերմիկ շրջաններում խոսել կիրթ, գեղեցիկ հայերենով:Նրանք ցուցադրաբար խոսում են միտումնավոր կերպով գռեհկացած ժարգոնով: Ընտանիքը շատ անգամ անտարբեր է այսպիսի փաստերի նկատմամբ: Կարևոր է, որ երեխան իր խոսքի կուլտուրային հետևի ամենուրեք, որ նրա մեջ մշակվի գեղագիտական զգացմունք նաև խոսքի նկատմամբ: Իսկ եթե որդին տեսնի, թե ինչպիսի գեղեցիկ բառապաշար ունի հայրը, ապա նա անպայման կյուրացնի հենց այդ բառապաշարը: **Ծնողն ունի հեղինակություն իր երեխայի մոտ և հետևաբար , երեխան փորձելու է նմանվել հորը:**

Գեղարվեստական խոսքն ունի մարդկային հոգիների վրա ներգործելու ոչ պակաս զորություն, քան մյուս արվեստները: Լավ է, երբ մարդ այդ խոսքի հմայքին հաղորդակից է դառնում դեռևս մանկուց:

Գեղագիտական զգացմունքների դաստիարակության հարցում ռիթմիկ, զրնգուն բանաստեղծությունները, լավ ընթերցված հեքիաթներն ու պատմվածքները նույնքան կարևորե են, որքան երաժշտությունն ու նկարչությունը:

Ինչպես ամեն մի զգացմունք , գեղագիտական զգացմունքներն ինքնին չեն հարստանա, նրանք ևս սնունդ են պահանջում:

Գեղարվեստի զգացողություն ունենալու, նրա պատշաճ հույզերն ապրելու համար երեխան պետք է մշտապես սերտ շփումներ ունենա բնության, նաև գրքի ու

արվեստների հետ: Խզվեց այդ կապը՝ արվեստի զգացողությունը կբթանա. կխամրեն, իրենց ուժն ու խորությունը կկորցնեն նաև գեղագիտական զգացմունքները:

Գեղագիտական զգացմունքն անհագուրդ է: Որքան ավելի սերտ ես շփվում գեղեցիկի հետ, այնքան խորն ես հասկանում գեղեցիկը,այնքան մեծ ու բուռն են լինում այդ իմացության հարուցած զգացմունքները:

Այս հարցը քննելիս չենք կարող չանդրադառնալ նաև մշակույթին: Մշակույթն, անշուշտ, զգալի չափով ինքնաբուխ ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Սակայն նրա տարբեր տեսակների ու ձևերի գործառնական նշանակությունը կարելի է տեսնել բավականին հստակորեն: Մշակույթի կարևորագույն ֆունկցիաներից մեկը նրա մանկավարժական ֆունկցիան է՝ նրա դաստիարակչական և ուսուցողական նշանակությունը: Մենք առանց դժվարության կարող ենք տեսնել, որ մշակույթի մի շարք բնագավառներ իսկապես ունեն իրենց յուրահատուկ մանկավարժական ֆունկցիաները.

1 երգերը ծառայում են մարդկանց գեղագիտական և հայրենասիրական դաստիարակության համար,

2 ասացվածքները՝ սոցիալ-բարոյական դաստիարակության. սոցիալականացման միջոցներ են,

3 հեքիաթները նպաստում են ընթերցողների գեղագիտական և հայրենասիրական դաստիարակությանը՝ միաժամանակ նպաստելով նաև երևակայության զարգացմանը,

4 հանելուկները ոչ միայն ժամանցի համար են, այլև մեծապես նպաստում են մարդու մտածողության և ինտուիցիայի զարգացմանը :

Մեր սերնդի ժողովրդական դաստիարակությունը առավելապես անուղղակի դաստիարակություն է և ավելի հաճախ ունենում է ինքնաբերական սոցիալականացման և ոչ թե անձի նպատակասլաց ձևավորման բնույթ: Հասկանալի է, որ մենք ամենից առաջ պետք է առանձնացնենք դաստիարակության երկու տեսակ՝ ուղղակի և անուղղակի:

Իսկ ի՞նչ է ուղղակի և անուղղակի դաստիարակությունը:

Մարդու ուղղակի դաստտիարակության գործընթաց տեղի է ունենում այն դեպքում, երբ և՛ դաստիարակության սուբյեկտը, և՛ դաստիարակության օբյեկտը գիտեն և գիտակցում են սեփական վարքն ու նրա նպատակները: Դաստիարակըգիտակցորեն իր առջև նպատակ է դնում դաստիարակել աշակերտին, նրա մեջ որոշակի պահանջմունքներ , հատկություններ և դիրքորոշումներ , բնավորության գծեր առաջ բերելով՝ օգտվելով իր տրամադրության տակ գտնվող միջոցներից և մեթոդներից: Դաստիարակության այս տեսակը հաճախ տհաճ է դաստիարակվողի համար և նրա մեջ դիմադրություն ՝ հարուցում՝ ընդհուպ մինչև դաստիարակողի նկատմամբ բացասական դիրքորոշման և նույնիսկ ժխտողական վերաբերմունքի առաջացումը:

Անուղղակի դաստիարակության դեպքում դաստիարակը սովորաբար գիտակցում է իր նպատակը ՝ դաստիարակել երեխային, բայց նա այդ մասին երեխային չի հայտնում , և վերջինս իրեն դաստիարակության օբյեկտի դերում չի ընկալում: Անուղղակի դաստիարակության հիմնական մեթոդը դաստիարակողի կողմից դաստիարակվողին այնպիսի գործունեության մեջ ներքաշելն է, որի կատարման ընթացքում դաստիարակվողի մեջ անձնային ոոշակի գծեր են ձևավորվում: էջ 32

Համատեղ խաղերն ու աշխատանքը անուղղակի դաստիարակության հիմնական միջոցներն են: Գործունեության այս տեսակներին մասնակցելիս դաստիարակվողը ինքն իրեն ընկալում է որպես գործունյա դերակատար, գործունեության ակտիվ ու նախաձեռնող մասնակից: Այս դեպքում մա այդ գործունեությանը մասնակցում է՝ ունենալով դրական ես-կոնցեպցիա: Ավելին՝ այդ գործընթացում նա կարողանում է էլ ավելի զարգացնել իր անձի մասին պատկերացումների այդ համակարգի դրական կողմերը: Ընդ որում, նման գործունեության մասնակցեը նպաստում է, որպեսզի դաստիարակվողի ես-կոնցեպցիան դառնա ավելի անաչառ ու օբյելտիվ, մի արդյունք, որը սոցիալ-հոգեբանական առումով հասուն անձին բնորոշ հիմնական գծերից մեկն է:

Անձի անուղղակի դաստիարակության միջոցներ են նաև դաստիարակի(ծնողի, մանկավարժի, ավագ ընկերոջ կամ ազգականի և այլն) հետ տարբեր հարցերի անկաշկանդ քննարկումները, որոնց ընթացքում դաստիարակի դեր կատարող անձը, կարծես թե պատահականորեն, այնպիսի դատողություններ է կատարում, որոնց նպատակը դաստիարակվողի մեջ ցանկալի տեսակետների և հատկությունների ձևավորումն է:

Ներգրավման մեխանիզմը շատ ուժեղ և հաճախ վճռական դեր է խաղում կրթության և դաստիարակության գործընթացներում: Ժողովրդի մտածող ներկայացուցիչներն ինտուիցիայով զգացել են այդ և շատ հաճախ երկարաշունչ խրատախոսություններ և քարոզներ կարդալու փոխարեն երեխաներին ներգրավել են գործունեության այս կամ այն տեսակի մեջ: էթնոմանկավարժները, աշխատանքային գործունեությանը վերաբերող մշակութային ժառագությունն ուսումնասիրելիս, պետք է հայտնաբերեն այդ երևույթը ւ գուցե օգտակար հետևություններ կատարեն նաև այսօրվա մանկավարժության համար:

Երեխաների և պատանիների անուղղակի դաստիարակությանը նպաստում են նաև ավանդույթները, ծեսերն ու արարողությունները, վարքի ազգային ավանդական այլ ձևեր: Դրանց մշտական մասնակիցը դառնալով՝ մարդն արդեն դժվարությամբ կարող է իրեն պատկերացնել ազգային մշակույթից և սեփական էթնիկական հանրույթից դուրս:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երեխային պետք է տալ ինքնադրսևորման , պատասխանատվություն կրելու առիթներ և ամենափոքր հաջողության դեպքում հարկավոր է քաջալերել, գնահատել , անկեղծորեն հրճվել նրա ցուցաբերած անգամ չնչին առաջընթացով, սա թերևս մեր կարծիքն է: Պարզելու համար, թե ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն ինչպե՞ս են արձագանքում սովորողների գրանցած հաջողություններին, ստացած գիտելիքներին, որքանո՞վ են տեղյակ նրանց դպրոցական կյանքից և այլն մենք որոշել ենք հարցաթերթիկների միջոցով գրանցել արդյունքները և պարզել ենք, որ այն ծնողները, որոնք աշխատում են , բավականին քիչ ժամանակ են տրամադրում երեխաներին և նրանց կրթությանը, նրանք քիչ մասնակցություն են ունենում սովորողների գրանցած հաջողությունների հարցում, սակայն պետք է նկատենք, որ այդ երեխաներն ավելի ինքնուրույն են, նրանց քայլերն ավելի վստահ են, քան այն ծնողների երեխաները, որոնք ամբողջ օրը նվիրում են իրենց երեխաներին և նրանց դաստիարակությանը: Մեր խորին համոզմամբ երեխային այնպիսի պարտականություններ պետք է տալ, որ, մեծերի վստահությունը նրան ապշեցնի: Հարկավոր է երեխաներին սովորեցնել որոշումներ ընդունել,հարգել նրանց որոշումները, նպաստել դրանց կատարմանը և պահանջել, որ պատասխանատվություն կրեն այդ որոշումների համար: Պետք է հարգել երեխայի կարծիքը բոլոր հարցերում, հաշվի նստել այդ կարծիքի հետ:

Մենք գրանցեցինք, որոշ պատասխաններ, որոնք հակամանկավարժական են. հարցը լուծելու համար նախ զրուցեցինք ծնողների հետ.մեր խոսքում կարևորեցինք հետևյալը. միշտ պետք է բացատրել երեխայի նրա հետ համաձայն չլինելու պատճառը: Միևնույն ժամանակ ամեն դեպքում պետք է ցույց տալ, որ երեխայի կարծիքը հարգանքի է արժանի: Հարկավոր է բացատրել այնքան մինչև, որ երեխան կհասկանա թե որն է ճիշտը: Մանկական մտածողությանն անհասկանալի է մանկավարժի, ծնողի «չի կարելիի» իմաստը, հարկավոր է տալ արգելքի բացատրությունը՝ իսկ «ինչու՞ չի կարելի»: Հարկավոր է լուրջ ընդունել երեխայի «ոչ»-ը: Այս և նմանատիպ հարցերը լուծելու համար մենք զրուցեցինք ծնողների հետ , ապա կազմեցինք ուղեցույցներ և խնդրեցինք ընթերցել ծնողներին, իսկ հարցեր առաջանալու դեպքում անպայման կապ հաստատել և քննարկել: Հետազոտությունը տևեց մեկ շաբաթ, այնուհետև սկսեցինք համագործակցությունը, գրանցեցինք արդյունքները և խնդրեցինք ծնողներին մշտապես կապի դուրս գալ և ներկայացնել երեխաների վարքը տանը, նրանց գործածած բառապաշարը , նախասիրությունների շրջանակը, արդյոք ի՞նչ փոփոխություններ են զգում ծնողները համագործակցության ընթացքում և այլն:

Ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները ողջունեցին մեր այս քայլը. նրանք մշտապես պատրաստ են համագործակցել և մասնակցել երեխաների դաստիարակությունը կազմակերպելիս:

Ստորև ներկայացնում ենք աշխատող ծնողների՝ 1, և ողջ ժամանակը երեխաներին տրամադրող ծնողների՝ 2, քանակը դասարանում:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր սերնդի ժողովրդական դաստիարակությունը առավելապես անուղղակի դաստիարակություն է և ավելի հաճախ ունենում է ինքնաբերական սոցիալականացման և ոչ թե անձի նպատակասլաց ձևավորման բնույթ:

2. Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին:

3. Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա, թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները:

4. Ամենապայծառ լույսը, որ ջերմացնում է մանկան հոգին, ծնողների սերն է ու գորովը:

5. Եթե **ծնողն ունի հեղինակություն իր երեխայի մոտ , հետևաբար , երեխան փորձելու է նմանվել իրեն :**

6. Այսօրվա երեխայի՝ վաղվա քաղաքացու դիմագիծը ուղղակի կախում ունի այն բանից, թե որոնք են նրա ծնողների, մերձավորների առաջատար պահանջմունքները և հարկ եղած դեպքում որ պահանջմունքը որին են զոհում, ասենք՝ նյութական շահը պատվի՞ն , թե՞ պատիվը՝ շահին:

7. Մանկության տարիներին անտեսված, չկարևորված, չգնահատված երեխան մեծանում է՝ գնահատվելու, արժևորվելու մշտական կարիքով:

8. Թե՛ դպրոցը, թե՛ ընտանիքը պատասխանատու են երեխայի մեջ սեփական անձի նկատմամբ հարգանքի, արժևորման, բարձր ինքնագնահատականի դաստիարակության հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հռիփսիմե Ղաջայան, Երեխաները տարիքն ի վեր, Երևան, 2002,

Селевко Г. К., Традиционная педагогическая технология и ее гуманистическая модернизация, М. 2005,

Стоунс Э., Психопедагогика ,М ., 1984,